ԻՐԻՆԱ ՏԱՐԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿ

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը (ՋՋ) կոչված են ապահովելու բնակավայրերի կենցաղային և տնտեսական գործունեությունը, բարելավելու բնակչության կենսական պահանջները, պահպանելու խմելու ջրի սանիտարական մաքրության և շրջակա միջավայրի բնապահպանական պահանջները: Բնակչությանը հասանելի և որակյալ ՋՋ ծառայությունների մատուցման ապահովման նպատակով պետության կողմից իրականացվում է ներդրումային քաղաքականություն՝ ուղղված

- համակարգերի ֆիզիկական կառուցվածքների պահպանմանը և վերականգնմանը,
- ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքի փոփոխմանը,
- համակարգերում հաշվառման համակարգի բարելավմանն ու արդիականացմանը, որոնք հնարավորություն կտան նվազեցնել ջրի ոչ արդյունավետ օգտագործումը և կնպաստեն ջրամատակարարման տնողության երկարացմանը:

Պետական բյուջեից տվյալ համակարգերի թերֆինանսավորման պայմաններում խոսք անգամ չի կարող լինել ոչ միայն ենթակառուցվածքները անվտանգ ձևով պահպանելու, այլև վերջիններիս զարգացման մասին: Այդ իսկ պատճառով այսօր արդեն ակնհայտ է, որ այս համակարգում առանց խոշոր ներդրումների ընդգրկման ու կառավարման, նոր տեխնոլոգիաների կիրառման՝ էական փոփոխություններ և բարելավումներ պարզապես հնարավոր չէ ակնկալել: Միայն մրցութային եղանակով մասնավոր կազմակերպությունների ներգրավման դեպքում հնարավորություն կստեղծվի հավաքագրել լրացուցիչ՝ մասնագիտական բարձր որակավորում ունեցող աշխատանքային ռեսուրսներ, իրականացնել առևտրային և տեխնիկական նորարարությունների ներդրում, որը կնպաստի ավելի էժան և արդյունավետ ծառայությունների մատուցմանը, իսկ մասնավոր հատվածի կողմից միջոցների ներդրմամբ՝ նաև նվազեցնել ու պետական բյուջեի ծախսերը:

Որպես սկզբունք՝ ՀՀ ջրային օրենսգրքում ամրագրված է, որ պետական նշանակություն ունեցող ՋՋ համակարգերը, որոնք սահմանվում են կառավարության կողմից, պետական սեփականություն են և մասնավորեցման ենթակա չեն: Քանի որ ՋՋ համակարգերի մասնավորեցումը չի կարող համարվել իրատեսական, այդ առումով կարևորվում է պետական սեփականություն հանդիսացող ՋՋ համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման ձևերի ներդրումը, որը հնարավորություն կտա տվյալ համակարգի կառավարումը փոխանցել մասնավոր անձանց:

Ջրային օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանված է, որ ՀՀ ջրային համակարգերի օգտագործման իրավունքը կարող է փոխանցվել հետևյալ ձևերով.

1. հավատարմագրային կառավարման հանձնելու միջոցով,
2. կոնցեսիայի պայմանագրով,
3. վարձակալությամբ,
4. առևտրային կազմակերպության ստեղծմամբ[1]:

ՋՋ համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման ձևերի կարգերը սահմանված են օրենսդրությամբ: Հարկ է նշել, որ այդ նպատակով ՀՀ կառավարությունը 2003թ. հունվարին հաստատեց ջրային համակարգերի օգտագործման իրավունքի հավատարմագրային կառավարման, վարձակալության և կոնցեսիայի պայմանագրով փոխանցման ձևերի մասին կարգերը:

Ջրային համակարգերի օգտագործման իրավունքի յուրաքանչյուր ձև ունի իր առանձնահատկությունները՝ կապված այն նպատակից, որը կառավարման մարմինը հետապնդում է՝ օտարելով օգտագործման իրավունքը: Ներդրումների ներգրավման տեսանկյունից առավել նպատակահարմար է կիրառել կոնցեսիայի պայմանագրերը՝ միաժամանակ դրանցով հստակ սահմանելով ներդրումների ուղղությունները: Ըստ կոնցեսիայի պայմանագրի՝ կոնցեսիոները իր վրա է վերցնում սպասարկման տարածքում ՋՋ համակարգերի վերականգնման և բարելավման նախապատրաստմանն անհրաժեշտ ներդրումների պատասխանատվությունը: Նա պարտավոր է ապահովել կապիտալ ներդրումների համար ֆինանսավորում, համալրել կոնցեսիոն ընկերության կապիտալը: Այդ առումով, կոնցեսիան համարվում է բարձր ռիսկայնություն ունեցող բիզնես: Շատ դեպքերում մասնավոր օպերատորները հակված չեն Հայաստանի նման քաղաքական, իրավական և տնտեսական միջավայր ունեցող երկրում ցանկացած ֆինանսական ներդրումներ պահանջող ծրագրերի մեջ ներգրավմանը:

Առկա ֆինանսական միջոցների պայմաններում ջրային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից առավել նպատակահարմար է այն հանձնել հավատարմագրային կառավարման, որի ժամանակ մասնավոր ընկերությունը հանրային ընկերության շրջանակներում իրականացնում է նախորոշված գործառույթներ: Վարձատրությունը սովորաբար կազմվում է նախնական հոնորարից՝ մատուցված ծառայությունների համար ֆիքսված վճարից և պարգևավճարից, որը կախված է պայմանագրում նշված որոշ տեխնիկական և գործառնական չափանիշներ ապահովելուց (օրինակ՝ ջրի կորստի նվազեցումը, որակի ապահովում, ծառայությունների ծավալի բարձրացումը, եկամուտների ավելացում և այլն): Մասնավոր օպերատորի վարձատրությունը որևէ ձևով կախված չէ ընկերության ֆինանսական գործունեության արդյունքից

[1] Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք՝ ընդունված ՀՀ ԱԺ կողմից 04.06.2002թ., ՀՀ Պ.Տ. թիվ 24 (199), 2002, էջ 37:

կամ նրա եկամտի մակարդակից: Մասնավոր ընկերության ամբողջ պայմանագրային հարաբերությունները անմիջականորեն կառավարության հետ են, այլ ոչ թե վերջնական սպառողի: Քանի որ պայմանագրով մասնավոր ընկերության կողմից կապիտալի կամ բաժնեմասի ներդրում չի պահանջվում, ապա այդ պայմանագրերն ավելի մեծ հնարավորություններ ունեն մասնավոր օպերատոր ներգրավելու:

ՀՀ մասնավոր օպերատորի մասնակցության ամենանշանակալի փորձը համարվում է Համաշխարհային Բանկի (ՀԲ) ծրագրի շրջանակներում միջազգային մրցույթում հաղթած մասնավոր օպերատոր «Էյ Սի Ի Էյ Էնդ Քամփնի Արմինիըն Յութիլիթի» ընկերության հետ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» (ԵՋԿ) ՓԲԸ կառավարումը 4 տարով փոխանցելու մասին 2000թ. փետրվարի 14-ին կնքված պայմանագիրը, որի համաձայն մասնավոր օպերատորը սկսեց գործել միայն 2000թ. մայիսի 1-ից: Այդ ժամկետը այնուհետև երկարաձգվեց ևս մեկ տարով՝ ԵՋԿ համակարգի բարեփոխումների համար ուղղված ՀԲ երկրորդ վարկային ծրագրի հետաձգման պատճառով և ավարտվեց 2005թ. մայիսի 1-ին: 2002թ. Երևանի սպասարկման առանձին համակարգում (Մաշտոցի մասնաճյուղ) կառավարումը պայմանագրային հիմունքներով (հանձնարարության պայմանագիր) հանձնվեց մասնավոր կառավարչին, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Սիսիանի մասնաճյուղը տրվեց հավատարմագրային կառավարման մասնավոր կառավարչին: Պետք է նշել, որ չնայած ջրային համակարգում ձեռքբերված հաջողություններին՝ կառավարման պայմանագրերը հնարավորություն չտվեցին ազատել պետությանը ՋՋ համակարգերում ներդրումներ կատարելու բեռից, առավել ևս, որ գործունեության հետ կապված ֆինանսական ռիսկի ստանձնումը նախատեսվում էր հանրային ընկերության կողմից:

Այդ իսկ պատճառով ներկայումս մասնավոր ընկերությունների ներգրավման հարցում կառավարության կողմից նախընտրելի է համարվում վարձակալության պայմանագրի տարբերակը, երբ առկա ջրային համակարգը հանձնելով վարձակալության՝ կարելի է դրանից վարձակալության վճարների միջոցով ավելի մեծ օգուտներ քաղել, քան շարունակել այն պահպանել ընդհանուր համակարգի ներքո:

Կառավարությունը, պայմանագրի համաձայն, մասնավոր ընկերությանը վարձակալության է տալիս ՋՋ համակարգերի առկա և նոր հիմնական միջոցները: Նա չի կորցնում իր սեփականության իրավունքը և պահպանում է վերահսկողությունը ազգային ու սոցիալական կարևորություն ունեցող այդ միջոցների նկատմամբ: Կառավարությունը վարձակալության ամբողջ ժամանակահատվածում ստանում է վարձակալական վճար հիմնական միջոցների համար, որն ինչ-որ չափով ապահովագրում է թե՛ կառավարությանը և թե՛ մասնավոր օպերատորին: Ստացած եկամուտը կարող է ծառայել որպես սահմանափակ ֆինանսական օգնություն կառավարության համար ու հնարավորություն տալ վերջինիս մարել առկա վարկերը: Վարձակալության եղանակի հիմնական թերությունն այն է, որ ընկերության ֆինանսավորման և ներդրումներ կատարելու ամբողջ պատասխանատվությունը վերապահվում է պետությանը: Կառավարությունը ստիպված է ներդրումների համար անհրաժեշտ գումարներ ապահովել, որը սահմանափակում է ապագա ներդրումների ծավալը: Բացի այդ, կառավարության չընդհատված սեփականության իրավունքը նույնպես հանգեցնում է հիմնական միջոցների վերականգնման համար անհրաժեշտ պատասխանատվության:

Վարձակալության պայմանագրին ներկայումս նախընտրություն են տալիս նաև մասնավոր ընկերությունները: Դա բացատրվում է նրանով, որ այն նախատեսում է ջրամատակարարման ոլորտի ավելի ամբողջական կառավարում, որը բարելավելու ավելի մեծ հնարավորություն ունի: Վարձակալական պայմանագիրը դիտարկվում է որպես մի տարբերակ, որը նախատեսում է ավելի մեծ ռիսկեր, քան կառավարման պայմանագիրը, բայց փոխարենը հնարավորություն է տալիս ստանալ ավելի մեծ եկամուտ: Այս եղանակը չի ենթադրում մեծ ներդրումային պարտավորություններ մասնավոր ընկերության համար, սակայն պայմանագրով նախատեսվում է ավելի մեծ ռիսկի ստանձնում նրա կողմից: Այն փաստը, որ առևտրային ռիսկը մեծամասամբ կամ ամբողջովին փոխանցվում է վարձակալին, պահանջում է ներդրումային դաշտում կողմերի սերտ համագործակցություն: Որպես կանոն՝ մասնավոր կողմը որոշում է ներդրումների անհրաժեշտությունը և առաջնահերթությունը, ապահովում դրանց ձեռքբերումը: Բայց նա բաժնեմասի կամ փոխառության ձևով որևէ կապիտալ չի տրամադրում: Վարձակալը կրում է լիակատար պատասխանատվություն ընկերության և՛ ծախսերի և՛, ի վերջո, շահույթի համար: Սա բավարար խթան է՝ ծառայությունները հնարավորինս լավագույն ձևով մատուցելու համար: Ինչ վերաբերում է մասնավոր ընկերության գործունեության վարձատրությանը, ապա նա իրավունք ունի իր վարձակալած միավորի գործունեությունից ստացած բոլոր եկամուտների նկատմամբ: Վարձատրությունը գոյանում է հանրային մարմնին վարձակալական վարձը վճարելուց հետո իրեն մնացած եկամուտից, սակագնի՝ նախապես որոշված մի մասից:

ՀՀ բնակավայրերի՝ խմելու ջրամատակարարման հարցերով զբաղվում են երկու խոշոր մասնագիտացված ընկերություններ՝ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ:

ՋՋ համակարգերի կառավարման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ բարեփոխումներ իրականացնելով՝ ՀԲ կողմից տրվող վարկային գումարների արդյունավետ օգտագործման և ջրային ոլորտի կառավարման միջազգային փորձը կիրառելու նպատակով ՀՀ կառավարությունը 2005թ. հայտարարեց Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ վարձակալության բաց միջազգային մրցույթ, որի արդյունքում հաղթող ճանաչվեց ֆրանսիական մասնավոր «Ժեներալ դեզ Օ» ընկերությունը: Այդ ընկերությունը գործում է ոչ միայն Ֆրանսիայի ամբողջ տարածքում՝ ապահովելով բաժանորդների սպասարկման առումով նախանձելի մակարդակ, այլև աշխարհի ավելի քան 60 երկրներում: Այդ առաջատար և խոշորագույն ընկերությունը մյուս երկու ընկերությունների հետ՝ «Սուեզն» և «ՍԱՌԻՐ» (վերջինս հայտնի է Հայաստանում՝ շահելով «Հայջրմուղկոյուղի» կառավարման մրցույթը) կարգավորում է ՋՋ համակարգի միջազգային շուկայի 70%-ը[1]:

Համաձայն ՀՀ կառավարության և ֆրանսիական. «Ժեներալ դեզ Օ» ընկերության միջև կնքված պայմանագրի՝ 2006թ. հունիսի 1-ից Երևան քաղաքում ՋՋ ծառայությունների մատակարարումը 10 տարով

[1] Մարկոսյան Ա., Նազարյան Գ., «Ջրային ռեսուրսների կառավարումը», Երևան, «Լույս», 2003թ. էջ 265:

ստանձնեց «Երևան ջուր» ընկերությունը, որը ՀԲ կողմից հայտարարված վարձակալության մրցույթում հաղթել էր Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ընկերության սպասարկման տարածքի ջրային համակարգի կառավարման իրավունքը: Մասնավոր ընկերությանը փոխանցվեց մայրաքաղաքի 1927 կմ երկարությամբ ներքին բաշխման և 1200 կմ երկարությամբ ջրահեռացման ցանցեր, որտեղ 30 տարուց ավելի ոչ մի խոշոր ներդրումներ չէին արվել, խողովակների մոտ 80% գտնվում էր անմխիթար վիճակում, ինչի արդյունքում մեծացել էին ջրի կորուստները: Երևանի «Ջրմուղկոյուղի» ՓԲԸ մատակարարված ջրակորուստները կազմում էին 80%, որի արդյունքում կրկնապատկվել էր իրացվող ջրի փաստացի ինքնարժեքը: Բնակչության մոտ 5%-ը ջուր էր ստանում օրվա ընթացքում 4-5 ժամ:

Ընկերությունը խոստացավ առաջիկա 10 տարում ներկայիս 81%-ից ջրի կորուստները հասցնել գոնե 40%-ի, որպեսզի ապահովվի խոստացած 95% շուրջօրյա ջրամատակարարումը ներկայիս 78%-ի փոխարեն: Ջրակորուստների նվազեցումը ընկերության համար կարևոր գործոն է, քանի որ խնդիրը ուղղակիորեն շաղկապված է ընկերության հասույթի հետ: Ջրակորուստների նվազեցումը արդեն հասույթի ավելացում է ենթադրում, և որպեսզի մենաշնորհ չձևավորվի, պայմանագրով սահմանվեց, որ 10%-ից ավելի շահույթի պարագայում 50%-ը տնօրինելու է հայկական կողմը[1]:

Չնայած որ պայմանագրային ներկայիս փուլում ֆրանսիացիները առաջնային են համարում բնակչության շարունակական ջրամատակարարման հիմնախնդիրը, միաժամանակ համակարգում ջրակորուստների նվազեցման ուղղությամբ ընկերության կողմից լայնածավալ աշխատանքներ են տարվում: Միայն 2006թ. վերջին մոդելի կոռելյատորի կիրառման շնորհիվ ֆրանսիացիներին հաջողվեց կանխել 5 մլն խ. մ ջրի հոսակորուստ: Ջրի ճնշումը չափելու համար Երևանի տարբեր շրջաններում խողովակաշարերի վրա տեղադրվեցին 76 լոգերներ: Ուսումնասիրությունները և ջրի ճնշման չափումները ցույց տվեցին, որ Երևանում ջրամատակարարման միջին տևողությունը կազմում է 17 ժամ: Քաղաքում կան ինչպես 4, այնպես էլ 24-ժամյա ջրամատակարարում ունեցող շրջաններ: Խմելու ջրամատակարարման համեմատաբար բարվոք վիճակ է ստեղծվել մայրաքաղաքի հյուսիսային շրջաններում՝ Ավան, Մարաշ, Արաբկիր, Զեյթուն համայնքներում: Ամենավատ վիճակը Էրեբունի և Սարի Թաղ շրջաններում է: Այդպիսի ուսումնասիրությունը առաջին անգամ թույլ տվեց հստակ, ստույգ և գիտական մակարդակով պարզել ջրամատակարարման մակարդակը մայրաքաղաքում: Խմելու ջրի կորուստները նվազեցնելու համար ներկայումս անհրաժեշտ է հրատապ փոխարինել 300 կմ ջրատար խողովակաշար, այնինչ վերականգնվել է ընկերության կողմից միայն 23-25 կմ: Ֆինանսական միջոցների անբավարարությունից բացի, այսօր Հայաստանում չկա համապատասխան ընկերություն, որն իր վրա վերցնի այդքան մեծ երկարությամբ ջրատար խողովակների փոխարինման ծրագրի իրականացումը: Միայն 2007թ. նախատեսված է փոխել 22 կմ խողովակաշար: Մոտավորապես 35% ջրի կորուստների կրճատում է ապահովվել Երևանում 1808 բնակարանների ջրամատակարարման խողովակների փոխարինման միջոցով: Ներկայումս առավել ցավոտ հարց է խմելու ջրի կորուստների կամ ջրագողության զանգվածային առկայության փաստը: Առանձնատների բնակիչները, խմելու ջրով ոռոգելով իրենց տնամերձերը, ջրի կորուստները մեծացնում են, քանի որ ոռոգման նպատակով ջուրը չի հաշվառվում: «Երևան ջուր» ընկերությունը նախատեսում է ներդնել նոր տեխնոլոգիաներ, որոնք թույլ կտան նկատել հոսակորուստները ու պայքարել դրանց դեմ: Արդեն օրինականացված են անօրինական միացումների և ջրի օգտագործման 1376 դեպքեր: Այսօր ֆրանսիական ընկերության տնօրինությունը պատրաստակամություն է հայտնել համատիրությունների վրա հիմնված քաղաքային ջրամատակարարման ծրագիրը շարունակելու, որովհետև այն, ի վերջո, առավելապես բխում է «Երևան ջուր» ընկերության շահերից: Ամեն ինչից զատ, այս ծրագրի միջոցով նաև մեկ գործընկերոջ հետ աշխատելու հնարավորություն է ստեղծվում՝ ի դեմս բազմաբնակարան շենքերի կառավարման մարմին հանդիսացող համատիրությունների: «Ժեներալ դեզ Օ»-ի բիզնես ծրագրում կորուստների հնգակի կրճատման դրույթ կա:

Պետք է նշել, որ մասնավոր ընկերության կողմից նաև աշխատանքներ են տարվում խմելու ջրի որակի բարելավման, մեխանիկական եղանակով խմելու ջրի մատակարարման աստիճանաբար ինքնահոս եղանակով փոխարինելու միջոցով էլեկտրաէներգիայի ծախսի աստիճանական կրճատման, տրված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում հաշվառման համակարգի բարելավման և արդիականացման ուղղությամբ: Համակարգի աշխատանքների արդյունավետության և օպերատիվության բարձրացման նպատակով նախատեսվում է 9 գործող բաժանմունքների փոխարեն սահմանել 5-ը, իսկ եթե աշխատողները չհամապատասխանեն ընկերության ներկայացրած պահանջներին, ապա հետագայում չեն բացառվում ընկերության մասնագիտական անձնակազմի փոփոխություններ: Պետք է հուսալ, որ ընկերությունը այդ քայլին չի դիմի՝ ելնելով զուտ եկամուտներ ստանալու նկատառումներից:

Ընկերության հետագա ներդրումները և շահույթը կախված են ջրի սակագներից: Սակագների վերանայման միջոցով ըստ հաստատված ժամկետացանկի՝ նախատեսվում է հետագա տարիների շահույթով աշխատանքը: Հարկ է նշել, որ սակագնի հաճախակի վերանայումը կարող է հանգեցնել անհամաձայնությունների և հակասությունների: Այս խնդիրը համեմատաբար հեշտ է լուծվում, երբ պահանջվող և փաստացի սակագների միջև տարբերությունը այնքան մեծ չէ:

Ինչպես գիտենք, «Երևան ջուր» ընկերությունը հենց սկզբից ջրի սակագնի բարձր նիշով մտավ շուկա՝ ջրի 1 խ. մ սակագինը 125 դրամից 172, 8 դրամ դարձնելով: Ի դեպ, միջազգային մրցույթում «Ժեներալ դեզ Օ» ընկերության հաղթելու հիմնական ցուցանիշը հենց առաջիկա 10 տարիների կտրվածքով նախատեսված նվազագույն սակագինն է համարվել: Ֆրանսիացիները խոստացան, որ առաջիկա 10 տարիներին այլևս ջրի թանկացում չի լինելու, նույնիսկ էժանանալու է և 2016թ. 1 խ. մ ջրի սակագինը դառնալու է 95 դրամ՝ ԱԱՀ ներառյալ: Սակայն 2007թ. հուլիսի 1-ից «Երևան ջուր» ընկերությունը մայրաքաղաքում խմելու ջրի սակագինը առաջարկեց բարձրացնել 9 դրամով և ներկայիս գործող 1 խ. մ դիմաց 172, 8 դրամի փոխարեն սպառողներից

[1] «Ջուրը նախ կթանկանա,-հետո կէժանանա», Հայաստանի հանրապետություն, օրաթերթ, 12.04.2006թ, էջ 2:

գանձել 181, 9 դրամ: Այն, որ «Երևան ջուր»-ը ջրի սակագինը չպետք է բարձրացներ՝ ամրագրված էր նաև ՀՀ կառավարության, ՀԲ և ֆրանսիական «Ժեներալ դեզ Օ» ընկերության միջև կնքված եռակողմ պայմանագրում: Ջրի սակագինը, համաձայն պայմանագրի՝ կարող էր փոխվել միայն ջրամատակարարման ծավալի, գնաճի, փոխարժեքի և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությունների դեպքում: Որպես այդպիսին ընկերությունը ներկայացրել էր ջրի սպառման ծավալների նվազումը: Մայրաքաղաքում սպառվում է ավելի քիչ ջուր, բան նախատեսել էին ֆրանսիացիները, այսինքն՝ ընկերության շահույթն ավելի քիչ է ստացվում, քան նրանք կարծում էին ջրամատակարարման պարտավորությունը ստանձնելուց առաջ, օրինակ՝ 2006թ. -ի համար նախատեսել էին, որ կսպառվի 65 մլն խ. մ ջուր, բայց սպառվել է 55 մլն խ. մ: Ո՞րն է դրա պատճառը: Տեսանելիորեն հնարավոր է ջրի սակագնի բարձրացումից կամ հաշվիչների տեղադրումից հետո մարդիկ սկսեն ջուրը սպառել ավելի խնայողաբար: Հնարավոր են նաև գեղծարարությունների դեպքեր: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքում պարզվեց, որ ջրի սպառման ծավալների նվազումը կազմել է 4, 7 մլն խ. մ: Սակագնի ճշգրտման անհրաժեշտ մեծությունը ընկերության առաջարկած 7, 6 դրամի (առանց ԱԱՀ) փոխարեն սահմանվեց 3 դրամ (առանց ԱԱՀ), ինչը նշանակում է, որ 2009թ. հուլիսի 1-ից, այսինքն «Երևան ջրի» վարձակալության պայմանագրային 4-րդ տարում 1 խ. մ 129 դրամի (առանց ԱԱՀ) փոխարեն մայրաքաղաքում խմելու ջրի բազիսային սակագինը կկազմի 132 դրամ (առանց ԱԱՀ)[1]: Մեր կարծիքով, ջրի կորուստները որևէ ձևով չպետք է ազդեն ջրի սակագնի վրա, քանի որ օգտագործվող ջրի քանակը ծածկում է ընկերության բոլոր ծախսերը, նաև ապահովում նրա շահույթը:

«Երևան ջուր» ընկերության կառավարչի խոսքերով «ջրի սակագնի բարձրացումը կազմում է ընդամենը 5%, և դա ավելի շատ սակագնի ճշգրտում է, քան բարձրացում... Դրանով ամսական միջինը ընդամենը 100 դրամով է ավելանում վճարվող գումարի չափը... Համաձայն ՀԲ չափանիշների, ջրի վարձավճարի չափը չպետք է գերազանցի ընտանեկան բյուջեի 4%-ը: Ֆրանսիայում այդ ցուցանիշը 1%-ից ցածր է, իսկ Հայաստանում՝ 2-2,5% է: Այսինքն այն ավելի ցածր է, քան էլեկտրաէներգիայի և ջերմամատակարարման վարձերը»[2]: Ըստ ֆրանսիացիների՝ սակագնային քաղաքականության հարցերը բավականաչափ թափանցիկ են և հենված են պայմանագրի պայմանների վրա:

Հարկ է նշել, որ սակագների վերանայման գործընթացը պետք է ճկուն և դինամիկ լինի առավել ևս, եթե հաշվի առնենք բարեփոխումների բարձր տեմպն ու ընկերությունների կառավարման համակարգում արագ տեղի ունեցող փոփոխությունները: Այսինքն՝ չպետք է սպասել ևս 6-7 տարի նոր սակագներ սահմանելու համար: Սակայն պետք է գնահատել դրա ազդեցությունը սպառողների վրա: Հայաստանում բարձր է աղքատության մակարդակը, ինչը ենթադրում է, որ թեև բնակչության միջին եկամուտների մակարդակի տեսանկյունից սահմանված սակագինը կարող է մատչելի թվալ, սակայն եկամուտների բարձր բևեռվածության պատճառով, հավանաբար բնակչության մի զգալի մասը ի վիճակի չլինի վճարել սահմանված սակագինը:

Սակագների բարձրացումը ավելացնում է խնդիրներն այն իմաստով, որ բնակչությունը սկսում է խնայել ջուրը, ճնշումը մեծանում է առանց այն էլ ոչ բարվոք վիճակում գտնվող խողովակներում, ավելանում է վթարների թիվը: Այն էլ ուղղակի անդրադառնում է պարտաճանաչ սպառողների բարեկեցության վրա: Եթե սակագների բարձրացումը չուղեկցվի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմամբ, ընկերության քաղաքականությունը հանգեցնի նրան, որ ՋՋ տեղական համակարգերում կատարված ներդրումներն օգտագործվեն սպեկուլյատիվ նպատակներով, ապա ՋՋ համակարգերում մասնավոր հատվածի ներգրավումը կարող է բացասաբար ազդել տվյալ համակարգի զարգացման վրա:

ՏԱՏՅԱՆԱ ՕՀԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Արդյունաբերության ձեռնարկությունների ուսումնասիրությունների և կատարված մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ: Այդ հիմնախնդիրները պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, մասնավորապես, արդյունաբերության արտադրական ձեռնարկությունների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններով, արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղման հետ կապված խնդիրներով, ինչպես նաև սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների պակասով:

ՀՀ-ում իրականացվող տնտեսական քաղաքականության արդյունքում վերջին մի քանի տարիների ընթացքում դրական փոփոխություններ են կատարվել արդյունաբերության ոլորտի կառուցվածքում, որոնք դրականապես նոր հարթություն են տեղափոխել արտադրական ձեռնարկությունների գործունեությանն առնչվող հիմնախնդիրները՝ դրանց դրսևորման եղանակների և ոլորտի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

Չնայած նրան, որ վերջին տարիներին ՀՀ-ում հիմնականում լուծվել են արտադրության գործունեությունը և զարգացմանը խոչընդոտող բազմաթիվ հիմնախնդիրներ ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ

[1] «Երևան ջրի» առաջարկը կյանքի կկոչվի երկու տարի հետո, «Ազգ», օրաթերթ, 17.05.2007թ., էջ 2:
[2] «Խոսքն ավելի շուտ խմելու ջրի սակագնի ճշգրտման մասին է», «Ազգ» օրաթերթ 18.05.2007թ.: